ԳԼԵՆԴԵԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՐԹԱՇՐՋԱՆ
223 North Jackson St., Glendale, California 91206-4380
Հեռախոս՝ 818-241-3111, ներքին հ. 1500 • Ֆաքս՝ 818-242-4213

Աշակերտների բարօրության ծառայություններ
Դկտր. Այլին Մեգրան

Դասերին հաճախելը կարևոր է

Օգոստոս 2022թ.,

Հարգելի ծնող/խնամակալ,

Կալիֆոռնիայում մեծ թվով աշակերտներ դուրս են մնում դպրոցից դպրոցական հաճախումների կամ վատ վարքագծի հետևանքով: Այդ պատճառով հաճախումների բարելավումը Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի Ուսումնական խորհրդի առաջնակարգ խնդիրն է: Մենք ձեր օգնության կարիքն ունենք: Ծնողները և խնամակալները պետք է հասկանան իրենց դերն աշակերտների՝ կանոնավոր կերպով և ժամանակին դպրոց հաճախելու կազմակերպման հարցում:

Ըստ Կալիֆոռնիայի Կրթության նախարարության, աշակերտը դպրոցից «քրոնիկ բացակայող» է, երբ ամիսը երկու կամ ավելի օր բացակայում է: Միգուցե դա շատ չի թվում, բայց, գումարվելով, դրանք արագ շատանում են: Ուսումնական տարվա տաս ամսվա ընթացքում, այն դառնում է 20 օր. դասերի բաց թողում մի ամբողջ ամսվա կտրվածքով: Ամիսը երկու օր բացակայելով՝ ձեր երեխան կարող է մյուս աշակերտներից ետ մնալ: Մանկապարտեզի և առաջին դասարանների քրոնիկ բացակայող աշակերտները, մեծ հավանականությամբ, երրորդ դասարանն ավարտելիս, կարդալ չեն կարողանա: Վեցերորդ դասարանում քրոնիկ բացակայող աշակերտները կարող են դուրս մնալ դպրոցից: Իններորդ դասարանում, լավ հաճախումներն ավելի լավ կարող են հուշել, որ աշակերտը կավարտի, քան ութերորդ դասարանի գնահատականները: **Կանոնավոր կերպով դպրոց հաճախելը կարևոր է:**

Ամեն օր ժամանակին դպրոց գնալը ևս կարևոր է: Աշակերտները պետք է իրենց տեղում և աշխատանքի համար պատրաստ լինեն յուրաքանչյուր օրվա կամ դասաժամի սկզբում: Եթե աշակերտը դասից ուշանում է 30 րոպե կամ ավել, երեք տարբեր օրերին, ապա նրա մոտ գրանցվում է բացակայություն մեկ ամբողջ օրվա համար (օրինակ՝ 3 անգամ 30 րոպե և ավել ուշանալը = 1 բացակայության):

Երբեմն երեխաները հիվանդանում են և պետք է տանը մնան: Խնդրում ենք տեղեկացնել ձեր դպրոցի ղեկավարությանը, եթե ձեր երեխան առողջական կամ մտավոր առողջության հետ կապված խնդիրներ ունի: Ձեր երեխայի առողջության մասին դպրոցի ղեկավարությանը տեղեկացնելիս՝ դպրոցը կարող է տրամադրել համապատասխան միջոցներ և ռեսուրսներ՝ ձեր երեխային աջակցելու և նրա հաջողությունն ապահովելու համար:

Մինչդեռ շատ գործոններ նպաստում են դպրոցում ունեցած հաջողություններին, կանոնավոր դպրոց հաճախելն ամենակարևորն է, որպեսզի աշակերտներն ավարտեն դպրոցը: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը ողջունում է ազատ և արդյունավետ շփումը ծնողների և խնամակալների հետ, ինչպեսիք են՝ հանդիպումներ դպրոցի ղեկավարության, ուսուցիչների, խորհրդատուների հետ, ինչպես նաև *Parent Connect-ի* միջոցով: Միասին խթանենք հաճախումների իրազեկությունը՝ մրցույթների միջոցով ներգրավելով մեր աշակերտներին, որպեսզի հասկանան հաճախումների կարևորության մասին: Ստորև ներկայացնում ենք, թե ինչ են իրենցից ներկայացնում մրցույթները յուրաքանչյուր դասարանի համար.

Պաստառ պատրաստելու մրցույթ տարրական դպրոցների աշակերտների համար
Տեսանյութ պատրաստելու մրցույթ միջին և ավագ դպրոցների աշակերտների համար

Աշխատանքների ներկայացման վերջնաժամկետն է՝ **սեպտեմբերի 23, 2022թ.**

Աշակերտների բարօրության ծառայությունների բաժինը հաղթողներին կհայտարարի 2022 թվականի սեպտեմբերի 30-ին:

Ձեր երեխայի կրթությունը կարևոր է մեզ համար: Խնդրում ենք դիմել ձեր երեխայի դպրոցի ղեկավարությանը, եթե որևէ հարց, մեկնաբանություն կամ մտահոգություն ունեք: Նրանք կկարողանան օգնել ձեզ հաճախումների հետ կապված ցանկացած հարցով:

Հարգանքով՝

Դկտր. Այլին Մեգրան
Տնօրեն

Վերանայվել է 2022թ.-ի օգոստոսին